

Մ Ա Ր Ձ Ո Ւ Մ Ի Ը

III.— ՄԱՐՁՈՒՄԻՆ ԲՆԱԽՕՍՍԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Ընդհանուր գծերով ցոյց տրուեցաւ մարձումի գլխաւոր ձեւնազորութիւնները: Այժմ նկատի առնենք մարձման այն բնախօսական ազդեցութիւնները, որոնք բազմաթիւ փորձերով հաստատուած են:

ա.— Մարձման ազդեցութիւնը մարսողական խողովակին վրայ.— Քաղցկեղէն (cancer) և կեղաւորութենէն (ulcération) զատ, ստամոքսի և աղիքներու կարգ մը հիւանդութիւնները կարելի է բարւոքել մարձումով: Մարսողական խողովակը բաղկացնող զանազան գործարաններու մեքենական ու քիմիական թուլացած գործողութիւնները մարձումով կը զորանան: Կ'անհետանայ անմարսողութեան ծանրութիւնը և ցաւերն ալ շուտով կը փարատին: Մարձումը՝ ազդելով մարսողական խողովակի որոշ զեղծերուն վրայ, կը դուրացնէ և կ'առատացնէ հիւթածորումները, որոնք մեծ դեր կը կատարեն մարսողութեան բնախօսութեան մէջ: Մարձումը կ'աւելցնէ ստամոքսի և աղիքներու մեքենական շարժումները, կը նուազեցնէ կազերու արտադրումը և կը բարւոքէ պնդութիւնը:

Մնդառութեան հետ կապուած են շատ մը գործարաններու առողջութիւնը և գործունէութիւնը. որով մարսողութեան գործարաններուն վրայ առաջ բերուած բացասական թէ դրական արդիւնքները անուղղակի կերպով կ'ազդեն մարմնի միւս մասերուն վրայ ևս: Այս է պատճառը որ, շատ անգամ մարսողութեան կանոնաւորումով կը բարւոքին կամ կը բուժուին նաեւ ոչ-ստամոքսային հիւանդութիւններ ալ:

բ.— Մարձման ազդեցութիւնը նեարդներու վրայ.— Ձեռնագործութեան տեսակը կախում ունի նեարդներու վրայ առաջ բերուելիք ազդեցութենէն, այսինքն կամ գրգռիչ և կամ հանգստացուցիչ կ'ըլլայ:

Նեարդային կարգ մը ցաւեր դիւրաւ ու լաւապէս կրնան բուժուիլ մարձումով: Մարձարուժութիւնը՝ ընդհանուր վիճակը լաւացնելով կ'անհետացնէ նաեւ մասնաւոր հիւանդութիւնները. որովհետեւ տեղական հիւանդութիւն մը յաճախ ամբողջ կազմուածքի (organisme) ներդաշնակութեան խախտման մէկ արտայայտութիւնն է:

Ծանօթ է թէ անդրադարձ (reflexe) շարժումները ինչ մեծ դեր ունին գործարաններու պաշտօնավարութեան մէջ. արդ, նեարդներու գրգռիչ մարձումը՝ անդրադարձ շարժումներու միջոցով կրնայ

ազդել կարգ մը գործարաններու գործունէութեան վրայ: Օրինակ, ազդելով մորթային նեարդներու վրայ կրնանք կանոնաւորել շնչառական շարժումները:

Նեարդներու համար ամէնէն գրգռիչ ձեռնագործութիւններն են, հարումն ու Թրթռացումը:

գ.— Մարման ազդեցութիւնը արեան շրջանառութեան վրայ.— Մարմնի սնունդը արիւնն է և զայն թունաւորողն ու տկարացնողը անխածինով բեռնաւոր մաշած մասերը:

Գիտենք որ թթուածինով հարուստ արեան բաշխումը մարմնի բոլոր հիւսուածքներուն մէջ և անոնցմէ փաստակար մասերու հեռացումը կը կատարուի արեան մեծ ու փոքր շրջանառութիւններուն միջոցովը:

Մարձումը, իբր մեքենական միջոց, կ'արագացնէ արեան շրջանառութիւնը, ինչ որ բնախօսական արդիւնքներ առաջ կը բերէ ամբողջ կազմին մէջ: Մէկ կողմէն զարկերակային մաքուր արիւնը առաջ կը մղէ, միւս կողմէն սեւերակայինը, այդպէսով կ'արագացնէ մարմնին նորոգումը և փնտասակար մասերուն հեռացումը:

Ըստ Ռուանո-ի, մասնաւորաբար որովայնի մարձումը կ'արագացնէ սրտի զարկերը: Այս մասին մարձումը անվրէպօրէն հաճելի ջերմութիւն մը կուտայ ստամոքսին և փոխարինելով բնախօսօրէն պակասած ջերմութիւնը, կը գիւրացնէ մարսողութիւնը:

Մարձումով կրնանք անհետացնել տեղական արիւնախոռումը, երակային արեան կայումը (stase), և այլն:

Արեան շրջանառութեան վրայ ամէնէն շատ ազդող ձեռնագործութիւններն են շփումն ու հունձումը:

դ.— Մարման ազդեցութիւնը մկաններուն վրայ.— Երբ մկանները իրենց կծկման (contraction) յատկութիւնը կորսնցուցած են, քանի մը վայրկեանի մարձումը կը բաւէ, զայն վերադարձնելու:

Ապացուցուած է որ մարձումով հիւսուածքներուն մէջ առաջ կուգայ թեթեւ ելեքտրական հոսանք և զգալի ջերմութիւն:

Առողջ անդամի մը յոգնութիւնը քանի մը վայրկեանէն կ'անհետանայ մարման շնորհիւ, որովհետև ան կ'աւելցնէ հիւսուածքներուն սննդառութիւնը և մկաններուն կծկումը:

Մկաններուն սննդառութիւնը կը խաթարուի կարգ մը հիւանդութիւններու պատճառով: Երկար հանգիստն ու անշարժութիւնը մկաններու ծիրում առաջ կը բերեն: Որպէսզի մկանները պահեն իրենց առաձգականութիւնն ու կծկուելու յատկութիւնը, պէտք է որ ստանան իրենց անհրաժեշտ քիմիական նիւթերը և տարհանն

կիզանիւթային մնացորդները: Մարձումը, ազդելով արեան շրջանառութեան վրայ, կը զիւրացնէ այս կրկնակ պահանջի բաւարարումը:

Առողջապահական տեսակէտով, մկանային աշխատանքէ հետեւող անձերուն յանձնարարելի է մարձումը, մկաններուն երկու գլխաւոր յատկութիւնները՝ առաձգականութիւնն ու կծկումը ապահովելու և մկանները ծիրումէ զերծ պահելու համար:

Մկանային հիւսուածքներուն վրայ մեծապէս ազդու են հոլմն ձուկն ու հարումը:

Ե.— Մարմման ազդեցութիւնը ճիւթածորումներուն վրայ.— Մարտդական գործարաններու մասին խօսուած ատեն տեսուեցաւ որ մարձումը կ'օժանդակէ ստամոքսի և աղիքներու մեքենական աշխատանքին. ասոր վրայ պէտք է աւելցնել որ ան կը նպաստէ նաեւ յիշեալ գործարաններու հիւթածորումին:

Մասնաւորաբար որովայնի մարձումէն վերջ, հաստատուած է որ մէզի քանակը կ'աւելնայ՝ երիկամուռնքներու վրայ եղած ազդեցութեան շնորհիւ: Դիտուած է որ մարձումը կը փութացնէ նաեւ գաշտանք: Ստնային գեղձերուն վրայ ազդելով կ'աւելցնէ ստնտու մօր կաթը: Հիւթածորումներու յաւելումն ու արագացումը առաջ կուգան մարմման նեարդներու վրայ ի գործ դրած ազդեցութենէն:

Այս ընդհանուր եւ համառօտ տեսութիւնը ցոյց կուտայ թէ մարձումը որքան օգտակար կրնայ ըլլալ բազմաթիւ ախտաբանական վիճակներու մէջ և նպաստել կարգ մը գործարաններու բրնականոն պաշտօնավարութեան:

Բայց օգտակար ձեռնագործութիւն մը կը պահանջէ, ախտորոշումէ վերջ, մասնագիտական հմտութիւն և ձեռքի բնական ճկունութիւն:

(Վերջ)

Հ: ՇԵՄՍ

ՓԱՐԻՋԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ Կ. ԽԱՅԻ ՕԳՆ. Մասնագիտոր իր դարմանատան մէջ (15, rue Jean-Goujon) ամէն չորեքշաբթի ժամը 9.30ին կեղծմաշկի (գուշ-պօղան, diphterie) դէմ կը պատուաստէ 2—15 տարեկան մանուկները: Զերմապէս կը յանձնարարենք ֆարիզահայ ծնողներու առիթէն օգտուիլ եւ պատուաստել տայ իրենց զաւակները այդ ախտը ճիւղանդուութեան դէմ, որ ամէն տարի բազմաթիւ զոհեր կը խլէ: Նոյն յանձնարարութիւնը կ'ընենք ուրիշ երկիրներ բնակող մեր ընթերցողներուն. կեղծմաշկի դէմ պատուաստը, որ բոլորովին անվնաս է, այժմ ամէն տեղ կը գտնուի: